ՔԱՐԱԳԼՈՒԽ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Աբրահամյան

Հեռախոս՝ +374.94.989950

Բնակչություն՝ 824

Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լաջին երեք կողմից բլուրներով շրջապատված գողտրիկ մի վայրում է գտնվում նախկին Եղեգնաձորի շրջանի, այժմ Վայոց ձորի մարզի Քարագլուխ գյուղը:
Գյուղում և նրա շրջապատում պահպանվել են V - XVll դարերի գյուղատեղիներ, 1230թ. կառուցվել է Սուրբ Մամասի վանքը, 13-րդ դարից գործում է Սուրբ Պողոս եկեղեցին, մատուռներ 7-14-րդ դարերից պահպանված խաչքարերով, գերեզմանոց, առանձին խաչքարերը, որոնցից մեկն էլ հենց գյուղ մուտք գործողները կարող են տեսնել, որը զանգվածեղ Քարագլխից անսովոր հակված՝ ասես քարեղեն խոնարհումով ողջունում է գյուղի հյուրերին:
Բնակիչների նախնիները 1828 թվականին գաղթել են Խոյ և Սալմաստ գավառներից։
Գուղի վարչական տարածքը 2744,7 հա է, գտնվում է մարզկենտրոնից 17 կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից բարձր է 1650 մետր:
Գյուղն ունի միջնակարգ դպրոց, նախակրթարան , գրադարան, մշակույթի տուն, կապի բաժանմումք և բուժկետ:
Համայնքում զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ:
Գյուղի հյուրընկալ աշխատասեր բնակիչներն իրենց շրջապատող բնության նման պարզ են, զուլալ ու զգայուն գեղեցիկ ու մարդկային հույզերի նկատմամբ: